ՄԻՖԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Ժամանակակից հասարակագիտության, մասնավորապես սոցիալական փիլիսոփայության, հոգեբանության և քաղաքագիտության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում զանգվածային գիտակցության այնպիսի դրսևորման ուսումնասիրությունը, ինչպիսին միֆն է: Վերջինիս նվիրված են հարյուրավոր հետազոտություններ, որոնք ընդգրկում են հարցի լայն շրջանակ՝ սկսած հնագույն շրջանում միֆի՝ որպես մարդու կողմից շրջապատող իրականության ընկալման և իմաստավորման առաջին տեսական փորձերից մինչև ժամանակակից դիցարարության դրսևորումները: Բոլոր այդ ուսումնասիրություններում ընդհանուր է, թերևս, այն պնդումը, թե միֆը իրականության խեղաթյուրված ընկալման արդյունք է, որը կա՛մ նպատակադրված ստեղծվում է անհատների կողմից, կա՛մ տարերայնորեն առաջանում է զանգվածային գիտակցության մեջ[1]: Ի տարբերություն դասական փիլիսոփայության, որի ներկայացուցիչները միֆը դիտարկում էին որպես իրեն սպառած արխայիկ երևույթ, ոչ դասական փիլիսոփայության շրջանակներում միֆը նոր իմաստավորում ստացավ՝ որպես մտածողության անօտարելի ձև, որը դրսևորվում է ժամանակակից մշակույթում, առօրյա շփման, քաղաքականության մեջ և այլն: Եթե նախնադարյան մարդու համար դիցարարության օբյեկտ էր **բնությունը,** ապա ժամանակակից մարդու առասպելաստեղծման ներուժի հիմնական «թիրախը» **սոցիալական իրականությունն է**: Դրանց միջև հիմնական տարբերություններից մեկն այն է, որ նախնադարյան մարդու կյանքում դեռևս գոյություն չունեին տարբեր «իրականություններ»՝ անհատական և սոցիալական, ֆիզիկական ու հոգևոր, և այդ պայմաններում միֆի միջոցով ստեղծվող աշխարհը նրա միակ իրականությունն էր: Այլ է պատկերը մեր օրերում, երբ միֆականացված իրականությունը հնարավորներից միայն մեկն է, որը, այդուհանդերձ, զգալի տեղ է զբաղեցնում ժամանակակից մարդու գիտակցությունում: Դրա համար բարենպաստ պայմաններ են ստեղծված ոչ միայն այն պատճառով, որ արդի հասարակություններում տարածված են զանգվածային մարդու և մշակույթի ժամանցային մոդելները, այլև շնորհիվ այն բանի, որ

[1] Տե՛ս, օրինակ, **Лосев А. Ф.** Философия. Мифология. Культура. М., 1991; **Голосовкер Э. Я.** Логика мифа. М., 1987:

գործ ունենք, Գ. Տարդի տերմինաբանությամբ, «հանդիսատեսի վերածված ամբոխի»[2] հետ: Ամբոխի համար անհրաժեշտ են մարդկանց ֆիզիկական համատեղ ներկայությունը և անմիջական շփումը, մինչդեռ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և զանգվածային լրատվամիջոցները ստեղծում են մարդկանց նոր՝ ոչ ֆիզիկական միասնություն, որին մարդը մասնակցում է որպես հանդիսատես: «Հեռուստացույցի առջև նստած կամ թերթ կարդացող միլիոնավոր մարդիկ այդ նոր տեսակի ամբոխի մաս են: Նրանք նման են, որովհետև ներշնչվող են, որովհետև այն պահին, երբ հեռուստացույց են դիտում կամ թերթ են կարդում, նրանք վերապրում են մարդկանց մեծ զանգվածի մաս լինելու զգացողությունը: ... Ժամանակակից տեխնոլոգիաները ամբոխից ստեղծել են հանդիսատես»[3]: Արդի հասարակությունների մշակույթը, որը մասնագիտական գրականության մեջ բնութագրվում է որպես **տեղեկատվական, զանգվածային և ժամանցային**, հանդես է գալիս ոչ միայն որպես հասարակական արժեքների և նորմերի, այլև միֆերի ստեղծման և տարածման համակարգ: Եթե հաշվի առնենք, որ մշակույթը լայն իմաստով կոչված է «մշակելու»՝ կենսաբանական մարդուց ստեղծելու մշակութային էակ, ապա պարզ է դառնում, որ ժամանակակից մշակույթի ազդեցության «արդյունքը», որպես կանոն, տեղեկատվությամբ կառավարվող ամբոխն է, ավելի կոնկրետ՝ հանդիսատեսը: Այդ «կարգավիճակը» ապահովում է ամբոխի մարդու **ժամանցը**՝ կրկին առավելապես զանգվածային տեղեկատվության միջոցների շնորհիվ:

Ժամանակակից միֆերի ստեղծման և տարածման թերևս ամենանպաստավոր ոլորտներն են պատմությունը և քաղաքականությունը: Եթե առաջինում գործ ունենք էթնոսի (ազգի) ծագման և էվոլյուցիայի հետ կապված առասպելների, պատմական անձանց հերոսացման, իրադարձությունների խեղաթյուրված մեկնաբանման և, օրինակ, ազգի կամ երկրի պատմական առաքելության վերաբերյալ առասպելաբանված պատկերացումների հետ, ապա քաղաքականության մեջ միֆը դրսևորվում է առավելապես իբրև իրական քաղաքական գործընթացները ոչ համարժեք կերպով լայն հանրությանը ներկայացնող և դրան համապատասխան քաղաքական գիտակցություն ձևավորող երևույթ: Ժամանակակից մարդու քաղաքական գիտակցության մեջ միախառնված են գաղափարականը և միֆականը, իրականը և երևակայականը, քննականը և կարծրատիպայինը: Բոլոր այս երևույթներից միֆն ունի այն առավելությունը, որ դրանում սոցիալական բարդ իրականությունն արտացոլվում է որպես պարզ, միասնական և գրեթե անփոփոխ համակարգ, ինչը ստեղծում է այն հասկանալու կեղծ տպավո-

[2] **Тард Г.** Мнение и толпа // Психология толп. М., Институт психологии РАН; Изд-во КСП+, 1999.

[3] **Макаревич Э. Ф., Карпухин О. И., Луков В. А.** Социальный контроль масс. М., Дрофа, 2007, с.139.

ռություն՝ իմիտացիա: Արդի տեխնոլոգիական հնարավորությունների շնորհիվ միֆը կարողանում է իրացնել իր գլխավոր գործառույթը՝ այնպիսի նոր իրականության ստեղծումը, որը կհամընկներ մարդկանց համոզմունքների ու սպասումների հետ և չէր պահանջի ռեֆլեքսիա: Հետազոտողների մեծ մասը հենց դա է համարում ժամանակակից միֆերի գլխավոր առանձնահատկությունը, ըստ որի՝ իրականության միֆականացված պատկերը ընդունվում է որպես իրերի բնական ընթացք[4]:

Քաղաքական միֆերի արդիականությունը նախևառաջ պայմանավորված է հենց քաղաքականության արդիականությամբ: Քաղաքականն այսօր ամենաակտիվ գործոնն է սոցիալական հարաբերությունների գրեթե բոլոր մակարդակներում, դրանից են կախված հասարակական կյանքի մյուս ոլորտները՝ տնտեսությունը, կրթությունը և այլն: Քաղաքական միֆը, որպես կանոն, ունի այսպես կոչված «իմաստային կենտրոն», որը կրում է միֆի հիմնական ծանրաբեռնվածությունը, և որի շուրջ «ծավալվում» է միֆական սյուժեն: Այդ իմաստային կենտրոնի դերում հանդես են գալիս արքետիպային երևույթներ, որոնք ապահովում են միֆի կենսունակությունը: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է արքետիպերի շուրջ ձևավորվող սյուժեների՝ ֆրանսիացի հետազոտող Ռ. Ժիրարդեի դասակարգումը, ըստ որի՝ դրանք չորսն են՝ դավադրություն, Ոսկե դար, հերոս-փրկիչ և միասնականություն[5]:

Դավադրության միֆը հանրայնացնում է ժողովրդի ենթադրյալ թշնամիների մասին պատկերացումներ, որոնց գործողություններն ուղղված են հասարակության և պետության ոչնչացմանը: Ոսկե դարի միֆը կոչ է անում կա՛մ վերադառնալ բաղձալի անցյալ, որտեղ իշխում էին հավասարությունը, եղբայրությունը և ազատությունը, կա՛մ կառուցել «երազանքի ապագա»: Ուշագրավ է, որ այս միֆի երկրորդ տարբերակում ներկան հանդես է գալիս իբրև Ոսկե դարի նախապատրաստական փուլ: Հերոս-փրկչի մասին միֆական սյուժեն քաղաքական գործչին վերագրում է զինվորի, առաջնորդի, երբեմն՝ մահապարտի և անգամ պայծառատեսի հատկանիշներ ու բարոյական բարձր որակներ: Այս երևույթն ավելի շատ հայտնի է որպես «անձի պաշտամունք»: Եվ, վերջապես, միասնականության միֆի միջոցով ներմուծվում է «մենք» և «նրանք» բաժանումը, որում «նրանք» պատասխանատու են սոցիալական բոլոր հիմնախնդիրների և բացթողումների համար, իսկ «մենք»-ը այն մարդիկ են, որոնք միասնական են ստեղծված իրավիճա-

---

[4] Տե՛ս **Малинова О. Ю.** Миф как категория символической политики // Символическая политика. Вып. 3. Политические функции мифов. М.: ИНИОН РАН, 2015, էջ 5-24:

[5] Տե՛ս **Жирарде Р.** Политические мифы и мифологии // Политическая наука. Теоретико-методологические и историко-культурные исследования. М., 1996, էջ 47-54:

կից հասարակությունը և պետությունը դուրս բերելու հարցում:

Կարելի է նկատել, որ Հայաստանում 2018 թվականին տեղի ունեցած իշխանափոխության և դրան նախորդած զանգվածային հավաքների ու գործողությունների ժամանակ նշված միֆերը քիչ թե շատ աշխատել են՝ մի դեպքում նպատակային կերպով տարածվելով շարժման առաջնորդների կողմից, մյուս դեպքում տարերայնորեն ձևավորվելով զանգվածային գիտակցության մեջ[6]:

Առհասարակ հնարավոր չէ պատկերացնել քաղաքական համակարգն առանց միֆերի: Վերջիններս անխուսափելիորեն ձևավորվում են քաղաքականության մեջ մի շարք խնդիրների՝ անձնականի և հանրայինի սահմանագծման, իրավունքների և ազատությունների մեկնաբանության, ազգային-մշակութային և քաղաքացիական-քաղաքակրթական նորմերի համատեղման և այլ հարցերի վերաբերյալ իմաստային-արժեքային ծանրաբեռնվածություն ունեցող գաղափարական համակարգեր ստեղծելու և տարածելու ընթացքում: Հասարակական կյանքից այս և նմանատիպ անօտարելի երևույթների պատճառով քաղաքականությունը միշտ ինչ-որ չափով համարժեք չէ առկա իրողություններին: Սակայն սոցիալական իրականությանը համարժեք լինել-չլինելուց է մեծապես կախված քաղաքականության միֆականացված լինելու չափը. որքան մեծ է անհամապատասխանությունը, այնքան շատ է քաղաքական միֆը տարածվում քաղաքական գիտակցության մեջ: Այս դեպքում միֆերը լրացվում են կեղծ հայրենասիրական քարոզով, պոպուլիզմով, քաղաքական պերճախոսությամբ և այլն:

Մյուս կողմից՝ քաղաքականության անհամապատասխանությունը սոցիալական իրականությանը բացասական է ազդում իշխանության լեգիտիմության վրա, իսկ լեգիտիմության և վստահության կորուստը իշխանությունը որպես կանոն վերականգնում է բռնությունը մեծացնելով: Այս դեպքում միֆերը, ինչպես նաև մանիպուլյացիան՝ որպես հոգևոր բռնության տեսակներ, թույլ են տալիս խուսափել քաղաքական ճնշում կամ ուղղակի ֆիզիկական բռնություն կիրառելուց:

Քաղաքականության մեջ միֆը կարող է կատարել նաև համախմբման գործառույթ, և այս իմաստով ճիշտ չէ միֆին միշտ միայն բացասական երանգավորում տալը: Միֆին դիմելը, այն օգտագործելը հաճախ բխում են քաղաքականության գլխավոր՝ **նպատակահարմարության** սկզբունքից: Օրինակ՝ Հայաստանում 2018 թվականին տեղի ունեցած հայտնի իրադարձությունների դեռևս խմորման փուլում շարժման առաջնորդների կողմից տարածվում էին «Սա հեղափոխություն է», «Հայաստանում տեղի է ունենում հեղափոխություն» կարգախոսները, որոնց միջոցով լայն զանգվածներին կոչ էր արվում, փաստո-

[6] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ն. Մելքոնյան, Է. Ասրիյան** Հայաստանյան «թավշյա» հեղափոխության միֆերը // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն, 2018, № 3 (27), էջ 74-83:

րեն, մասնակից դառնալ մեծ, նշանակալից և երկրի համար կարևոր, անգամ պատմական մի գործընթացի: Անմիջապես մարդկանց աչքի առաջ տեղի ունեցող կամ արդեն կայացած հեղափոխության մասին շարժման սկզբնական շրջանում խոսելու միջոցով ստեղծվեց «հեղափոխության» միֆը, առանց որի, սակայն, կարող էր հարցականի տակ հայտնվել շարժումն առհասարակ, քանի որ հայ հասարակությունը անկախության շրջանում հասցրել էր սպառել «ընդդիմադիր շարժում», «քաղաքական պայքար», «ուժի կիրառմամբ իշխանափոխություն», «իշխանափոխություն ընտրությունների միջոցով» և նմանատիպ կարգախոսների ներքո իրականացվող քաղաքական նախաձեռնությունների գաղափարական և գործնական ողջ «գրավչությունը»: Թերևս միակ քաղաքական գործընթացը, որ կարող էր անհրաժեշտ ազդեցությունն ունենալ հասարակական գիտակցության վրա, հեղափոխությունն էր՝ անկախ դրա իրական թե միֆականացված բնույթից: Այդ կապակցությամբ ֆրանսիացի հրապարակախոս և քաղաքական գործիչ Ջ. Սորելը նշում է. «Գաղափարախոսությանը հեղափոխական թափ հաղորդելու համար անհրաժեշտ է միֆ: Գաղափարախոսությունն այդ ժամանակ է գրավում զանգվածների ուշադրությունը: Միֆը պետք է արտացոլի ժողովրդի սպասումներր, և բացարձակ նշանակություն չունի, որ միֆր հաճախ հեռանում է իրականությունից, քանի որ գլխավոր խնդիրը մարդկանց երևակայության վրա ազդելն է»[7]:

Քաղաքական միֆն առավել արդիական և պահանջված է դառնում հասարակական համակարգի փոխակերպումների և սոցիոմշակութային ճգնաժամերի ընթացքում, երբ մարդու գիտակցությունը արագ փոխվող, անորսալի սոցիալական իրականությունում կողմնորոշվելու համար հիմնվում է միֆի՝ որպես իրականության առավել կայուն և հուսալի արտացոլման վրա: Սրանով է պայմանավորված նաև այն՝ առաջին հայացքից պարադոքսալ հանգամանքը, որ միֆերի տարածման համար առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում կառավարման ժողովրդավարական համակարգը, որը համարժեք կերպով ընկալելը և հասկանալը բավականին բարդ է, քան, օրինակ, միապետական կամ բռնապետական ռեժիմը, որի պայմաններում «խաղի կանոնները» առավել պարզ են և հասկանալի: Նաև այս հանգամանքով է պայմանավորված ժամանակակից միֆերի և հատկապես քաղաքական միֆի նկատմամբ 20-րդ դարի երկրորդ կեսին փիլիսոփայական և առհասարակ հասարակագիտական ուշադրությունը, քանի որ այդ ժամանակահատվածն է համընկնում գլոբալացման հոսանքներով կառավարման ժողովրդավարական մոդելի տարածման հետ:

Այդ գործընթացից դուրս չի մնացել նաև Հայաստանը, որտեղ հատկապես անկախության շրջանում կիրառության մեջ են դրվել քա-

[7] Մեջբերումն ըստ **Макаревич Э. Ф., Карпухин О. И., Луков В. А.** Социальный контроль масс. М., Дрофа, 2007, էջ 128:

դաքական մի շարք միֆեր, որոնք մի կողմից արտացոլում էին հասարակության ակնկալիքներն ու ցանկությունները, մյուս կողմից, սակայն, կոչված էին ներկայացնելու դրանց հետևողական չիրականացման, խորացող սոցիալական անհավասարության և բացասական այլ երևույթների «օբյեկտիվ» պատճառները:

Ժամանակագրական առումով առաջիններից են, թերևս, **անցումային փուլի** և **երիտասարդ պետության** միֆերը: Քանի որ միֆը ոչ թե մերժում է իրականությունը, այլ հանդես է գալիս որպես փաստերի և իրադարձությունների յուրահատուկ **մեկնաբանություն,** ապա նշված երկու դեպքերում էլ գործ ունենք այդ օրինաչափության հետ: Անցումային փուլի միֆը պետության և հասարակության առջև ծառացած հիմնահարցերը մեկնաբանում է ոչ թե երկրի ղեկավարների անարդյունավետ քաղաքականությամբ, այլ այն բանով, որ հասարակությունն անցումային շրջան է ապրում, և դրանում տարբեր տիպի հիմնախնդիրների և սոցիալական հակասությունների առաջացումը բնական է և անփուսափելի: Նմանապես, երիտասարդ պետության միֆը կոչված էր Հայաստանում մարդու և հասարակության հետ կապված բազմաթիվ հիմնահարցերի առաջացումը վերագրելու ոչ թե, օրինակ, կադրային սխալ քաղաքականությանը, այլ այն բանին, որ պետությունը դեռ երիտասարդ է, կայացած չէ, սովորում է իր սխալներից և այլն: Այստեղ անտեսվում էր այն հանգամանքը, որ պետության ղեկավարներր բնավ երիտասարդ չէին, դեռ ավելին՝ նրանցից շատերն ունեին պետական և ռազմական կառավարման փորձ:

Արդեն Հանրապետական կուսակցության իշխանության տարիներին տարածվեց **կայունության** միֆը, որը կոչված էր զանգվածային գիտակցության մեջ ամրապնդելու այն համոզմունքը, որ միայն իրեն «ազգային-պահպանողական» հռչակող կուսակցությունը կարող է լինել պետության կայունության երաշխավոր: Այս միֆի տարածումն ուղեկցվում էր **«անվտանգության ապահովման»** և **«պետականության հնարավոր կորստի»** միֆերով: Առաջինը զանգվածային գիտակցության մեջ ամրապնդում էր այն պատկերացումը, թե իշխանության արտաքին քաղաքականությունը հաջողությամբ լուծում է ազգային և պետական անվտանգության հետ կապված հիմնախնդիրները: Այդ միֆը փլուզվեց 2016 թվականի ապրիլյան իրադարձությունների ժամանակ, երբ փաստացի ոչ թե պետությունը կամ իշխանությունը պաշտպանեց քաղաքացիներին, այլ հակառակը՝ քաղաքացիներն ապահովեցին պետության անվտանգությունը: Դրա միջոցով հաղթահարվեց նաև տարիներ շարունակ տարածվող այն գաղափարը, թե իբր Հայաստանում հնարավոր իշխանափոխությունը հղի է պետականության կորստի վտանգով: Այդ միֆը ջախջախվեց 2018 թվականի իշխանափոխության արդյունքում:

Հայաստանի քաղաքական համակարգում ձևավորված կենսունակ

քաղաքական միֆերից հերթականը **լեգիտիմության** միֆն է, որը կապված է ընտրությունների հետ և հասարակական գիտակցության մեջ արտացոլված է այն համոզմունքի տեսքով, որ եթե իշխանությունն ընտրված է ժողովրդի կողմից, ապա նրա բոլոր գործողությունները լեգիտիմ են: Այս միֆի շրջանակներում չեն տարբերակվում իշխանության ձգտելը և իշխանություն դառնալը, մինչդեռ այս երկու կարգավիճակներում նույն քաղաքական ուժը գործում է իրավական տարբեր նորմերում, և **իշխանության լեգալությունից ուղղակիորեն չի բխում նրա լեգիտիմությունը**: Այս միֆի տարածումից զերծ չի մնացել նաև Հայաստանի ներկա իշխանությունը, որի գործողություններում նույնպես նկատելի են լեգալությունը լեգիտիմության տեսքով ներկայացնելու փորձերը:

Քաղաքական համակարգին ուղղակիորեն առնչվող ևս մեկ միֆ, որը զգալի տարածում ունի նաև հայ հասարակությունում, վերաբերում է **ժողովրդավարության և մեծամասնության** հարաբերության հարցին: Բանն այն է, որ այս երկու երևույթները քաղաքական միֆում միտումնավոր միախառվում են՝ ներկայանալով որպես մեկը մյուսի տրամաբանական շարունակություն: Օրինակ՝ սովորաբար ընտրություններից հետո հաղթող քաղաքական ուժը հայտարարում է, որ եկել է իշխանության ազատ, արդար և ժողովրդավարական ընտրություններով, ինչի համար որպես հիմնավորում բերվում են ընտրությունների արդյունքները՝ ընտրողների մեծամասնության քվեն ստանալը: Մինչդեռ ընտրությունների ժողովրդավարական ընթացքը ոչ մի կապ չունի ձայների բաշխման կամ մեծամասնության քվեն ստանալու հետ, ինչպես նաև մեծամասնության կողմից ընտրված լինելը չի նշանակում, որ ընտրություններն անցել են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան: Ընտրությունների ժողովրդավարական լինելը որոշվում է մասնակիցների հնարավորությունների հավասարության և օրենքով սահմանված այլ իրավունքների պաշտպանությամբ, ինչը ոչ մի կապ չունի ընտրություններին մասնակցող այս կամ այն քաղաքական ուժի ստացած ձայների քանակի հետ: Մինչդեռ քաղաքական այս միֆի շրջանակներում ընտրությունների համապատասխանությունը ժողովրդավարության սկզբունքներին և մեծամասնության քվե ստանալը հիմնականում հաղթող ուժի կողմից ներկայացվում են որպես մեկը մյուսին ենթադրող երևույթներ, ինչը հասարակական գիտակցության մեջ ստեղծում է քաղաքական գործընթացների թյուրըմբռնում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի քաղաքական համակարգում անկախությունից ի վեր ստեղծվել և տարածվել են մի շարք միֆեր, որոնցից են **երիտասարդ պետության, անցումային շրջանի, կայունության և անվտանգության ապահովման, պետականության հնարավոր կորստի և ընտրությունների ժողովրդավարական բնույթի** մասին միֆերը, որոնք հասարակական գիտակցության մեջ քաղաքա-

կան գործընթացներն արտացոլել են խեղաթյուրված, ինչը հնարավորություն է տվել իշխանություններին կիրառելու մանիպուլյացիաներ, խուսափելու հաշվետվությունից և պատասխանատվությունից, ստեղծելու քաղաքական օրակարգի և սոցիալական իրականության միջև հակասության բացակայության պատրանք և այլն: Հարկ է նաև նշել, որ քաղաքական համակարգի միֆազերծմանը կամ միֆի ազդեցության նվազեցմանը հնարավոր է հասնել քննական և քննադատական մտածողության զարգացման և հանրային՝ ոչ թե կուլիսային քաղաքականության տարածման շնորհիվ:

Բանալի բառեր - *քաղաքական միֆ, զանգվածային գիտակցություն, ամբոխ, արքետիպ, հանդիսատես, սոցիալական իրականություն*

МОВСЕС ДЕМИРЧЯН – *Миф в современной политической системе Армении.* – В статье анализируется формирование политических мифов, а также наиболее распространённые из них в политической системе Армении. Утверждается, что каждый миф имеет *смысловой центр*, роль которого в большинстве случаев играют архетипы. История и политика – те области, где создаётся наибольшее количество мифов. Политические мифы в массовом сознании отражают не реальные процессы, а их искажения, интерпретации. Они распространяются благодаря современным коммуникационным технологиям и СМИ. Утверждается, что помимо негативного влияния на общественное сознание, миф может иметь и положительный эффект, который выражается в мобилизации общества, без чего иногда невозможно преодолеть кризис.

Мифами о молодом государстве и переходном периоде власти страны долго мотивировали невозможность решить основные социальные проблемы, коррупцию и т.д. Одним из наиболее устойчивых политических мифов является миф о легитимности избранной власти, в котором легальность и легитимность предстают как подразумевающие друг друга явления, хотя на самом деле легально избранная власть может быть нелегитимной, а нелегитимная власть может действовать вполне легально.

Ключевые слова: *политический миф, массовое сознание, толпа, архетип, зритель, социальная реальность*

MOVSES DEMIRTSYAN – *Myth in the Modern Political System of Armenia.* – The article analyzes the nature and features of the formation of political myths, as well as the most common political myths in the political system of Armenia. It is argued that every myth has a **semantic center**, the role of which in most cases is played by archetypes. The main plot of the myth unfolds around the semantic center. History and politics are the areas where most myths are created. Political myths in the mass consciousness do not reflect real political processes, but their **distortions, original interpretations**. They are widely used due to modern communication technologies and mass media. It is argued, that in addition to the negative impact on public consciousness, the myth can also have a positive effect, which is expressed in the mobilization of society, without which it is sometimes impossible to imagine overcoming the crisis in the political system, expressing the interests and goals of society or affirming democratic principles.

In the article, some examples of political myths in the political system of Armenia are discussed: by the myths about **a young state** and **a transitional period** the authori-

ties of the country have for a long time motivated the impossibility of solving basic social problems, corruption, weak democratization of social relations, etc. The myths about **guaranteed security** and **sustainability of social life** in the mass consciousness reflected the idea of a supposedly productive domestic and foreign policy. One of the most resistant political myths is the myth of the **legitimacy of the chosen power** in which the legality and legitimacy of power are presented as implying each other phenomena, although legally elected power may not be legitimate, and illegitimate power may act completely legally.

Simultaneously, with the process of a mythologization of politics, the process of demythologization in society is also taking place, which is most productive in the development of analytical and critical thinking, as well as on the condition that political relations are public, not backstage.

Key Words: *political myth, mass consciousness, crowd, archetype, viewer, social reality*

Ներկայացվել է՝ 14.05.2020, Գրախոսվել է՝ 03.06.2020, Ընդունվել է տպագրության՝ 24.07.2020